# ՄԻԱՍՆԱԿԱՆ ԵՆՔ ՄԻԱՅՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ

***«Մեկ ազգ, մեկ մշակույթ» ծրագրի շրջանակներում Հայաստանում կազմակերպվեցին մի շարք միջոցառումներ, որոնց մասնակցում էին Սփյուռքի տարբեր համայնքների ներկայացուցիչներ: Նրանցից մեկն էլ Ֆրեզնոյի հայ համայնքի ներկայացուցիչ, ռեժիսոր, լուսանկարիչ ՓՈԼ ԳԱԼԻՆՅԱՆՆ էր, որի Վ.Սարոյանի մասին պատմող «Մարդը եւ գրողը» վավերագրական ֆիլմը վերջերս ցուցադրվեց «Մոսկվա» կինոթատրոնում: Նրա հետ մեր զրույցը ֆիլմի, «Մեկ ազգ, մեկ մշակույթ» ծրագրի, ինչպես եւ Ֆրեզնոյի հայ համայնքի մասին է:***

***-Պրն Գալինյան, Ձեր ֆիլմը ցուցադրվել է աշխարհի մոտ 14 երկրներում, արդեն նաեւ Հայաստանում: Ինչպե՞ս ընդունվեց այստեղ:***

-Եթե հայաստանյան ընդունելությունը համեմատեմ մյուս երկրների հետ, ապա այն նկատելիորեն զիջում է: Ֆիլմը պատմում է Վ.Սարոյանի կյանքի, ստեղծագործության մասին, եւ կարծում եմ, որ այս դեպքում խոսքը վերաբերում է ոչ այնքան կինոնկարի ընդունելությանը, որքան մեր մեծանուն գրողի անձի հանդեպ հետաքրքրություն ցուցաբերելուն: Այս առումով օտարազգիներն ավելի խանդավառ եւ հետաքրքրված էին: Իհարկե, նրանց ընդունելությունից հետո հայրենիքից շատ ավելին էի սպասում, բայց ամենեւին էլ հուսախաբ չեմ եղել, ո՛չ: Ընդհանուր առմամբ, Հայաստանում էլ ֆիլմի ցուցադրումը հաջող անցավ:

***-Ֆիլմի հեղինակային իրավունքը ստանձնելու խնդրով առաջարկներ չեղա՞ն:***

-Նման հարց չի քննարկվել, ու որեւէ մեկը չի առաջարկել, որ ֆիլմը մնա Հայաստանում՝ չնայած կարող էի մտածել այդ ուղղությամբ եւ նման հնարավորություն տեսնում էի: Ավելին, արտասահմանում էլ այս կինոնկարի հեղինակային իրավունքներով հետաքրքրվողները բոլորն էլ օտարազգիներ են՝ հիմնականում հրեական կազմակերպություններ: Վերջիններս առաջարկում են 300 հազար դոլարից ավելի գումար, սակայն չեմ ցանկանում ֆիլմը հենց այնպես վաճառել: Մի պայման ունեմ, որ դնելու եմ բոլոր գնորդների առջեւ: Ֆիլմը գնելու դեպքում համապատասխան կազմակերպությունը պետք է

պարտավորվի, որ դրա տեսաժապավենները աշխարհի բոլոր հայկական կազմակերպություններ: Վերջիններս առաջարկում են 300 հազար դոլարից ավելի գումար, սակայն չեմ ցանկանում ֆիլմը հենց այնպես վաճառել: Մի պայման ունեմ, որ դնելու եմ բոլոր գնորդների առջեւ: Ֆիլմը գնելու դեպքում համապատասխան կազմակերպությունը պետք է պարտավորվի, որ դրա տեսաժապավենները աշխարհի բոլոր հայկական կազմակերպություններին, ովքեր կցանկանան այն ձեռք բերել, պետք է վաճառեն ինքնարժեքով: Պայմանս գուցե շատերի համար անընդունելի լինի, սակայն եթե տեսնեմ, որ այն ոչ ոք չի ընդունում, ինքս կզբաղվեմ ֆիլմի տարածման գործով: Թեեւ ֆինանսապես կարող եմ տուժել, սակայն հոգեպես շահելու եմ:

***-Որքա՞ն հայեր են ապրում Ֆրեզնոյում, եւ ազգապահպանության խնդիրներն ինչպե՞ս են լուծվում:***

-Ֆրեզնոյում ներկայումս կա 40-45 հազար հայ. նրանք քաղաքում հաստատվել են մեծամասամբ 1890-ական թվականներին: Դժվար է ասել, թե համայնքի հնաբնակները որքանով են հայ մնացել, որովհետեւ նրանց մի մասը՝ հատկապես երիտասարդները, հայերեն գրեթե չգիտեն, թեեւ ազգանունով հայ են եւ դրանով հպարտանում են: Ազգայինի գիտակցության զգացումը ավելի ցայտուն է վերջին տարիներին այստեղ եկածների շրջանում: Ֆրեզնոյում կան 32-ից ավելի հայկական կազմակերպություններ, որոնք հիմնականում կուսակցական բնույթի են: Սակայն մյուս հայ համայնքների նման, մենք եւս մի ցավալի խնդիր ունենք: Համայնքը միասնական չէ, այն բաժանված է երկու մասի: Մասնատվածությունն առկա է ինչպես մշակութային կյանքում, երբ մի խմբի միջոցառումներին մյուսները չեն մասնակցում, այնպես էլ եկեղեցիների՝ հավատի ասպարեզում:

Ունենք երկու եկեղեցի՝ Սուրբ Երրորդության եւ Սուրբ Պողոս, սակայն այս եկեղեցիներից մեկն ընդունողը մյուսը չի ընդունում ու չի հաճախում: Համայնքի ամեն մի հատված ապրում է իր կյանքով: Սա մեր ազգի դժբախտությունն է, ու ցավալի է, որ շատ-շատերն առայսօր չեն կարողանում բացատրել ու իրենք էլ չեն հասկանում, թե ինչո՞ւ են ընդունում, ասենք, էջմիածնական, այլ ոչ՝ Կիլիկիո եկեղեցին:

***-Քանի՞ հայկական դպրոց կա:***

-Մեկ լրիվ հայկական դպրոց, ուր սովորում է 300 երեխա: Ունենք նաեւ շաբաթօրյա եւ կիրակնօրյա երկու դպրոց, սակայն այս առումով էլ համայնքում շփոթ է տիրում: Շաբաթօրյա դպրոցը Հայաստանից եկածների կողմից ստեղծվել է վերջերս, եւ ուսուցումը արեւելահայերեն է, իսկ կիրակնօրյայում՝ ուսուցանվում է արեւմտահայերեն: Այսպիսով նաեւ լեզվի հարցում միասնականություն չկա: Կան երեխաներ, որոնք այցելում են ե՛ւ շաբաթօրյա, ե՛ւ կիրակնօրյա դպրոց, ուստի երիտասարդ սերունդն էլ քաոսի մեջ է հայտնվել:

***-Ըստ Ձեզ, «Մեկը ազգ, մեկ մշակույթ» ծրագիրը Հայաստան-Սփյուռք փոխհարաբերություններում ինչ-որ ազդեցություն կունենա՞:***

-Նախ՝ նշեմ, որ այցելությունս եւ ֆիլմի ցուցադրումն իմ անձնական նախաձեռնության արդյունքն էր: Դեռեւս 1991-ին էի ցանկանում, որ պրեմիերան կայանա Հայաստանում, սակայն քաղաքական պատճառներով այն ժամանակ դա ինձ չհաջողվեց: Ուրախ եմ, որ թեկուզեւ իմ նախաձեռնությամբ, «Մեկ ազգ, մեկ մշակույթի» շրջանակներում ֆիլմն ի վերջո՝ 8-9 տարի աշխարհի տարբեր ծայրերում ցուցադրվելուց հետո էկրան բարձրացավ նաեւ այստեղ: Ինձ այդ ծրագիրն օգնեց իրականացնելու երազանքս: Հպվատում եմ, որ Վ.Սարոյանի ոգին այժմ Հայաստանում է, ուստի մի տեսակ պատասխանատվություն էի զգում եւ ցանկանում էի, որ համաշխարհային մրցույթներում 6 մրցանակ ստացած այդ ֆիլմը ցուցադրվեր նաեւ այստեղ, այլապես ոչ մի մրցանակ ինձ համար նշանակություն չուներ: Այլ հարց է, որ մշակույթի նախարարության կողմից միջոցառումը թերի էր կազմակերպված, բայց նման հարցերի մասին պետք չէ խոսել:

Ինչ վերաբերում է «Մեկ ազգ, մեկ մշակույթ» ծրագրի գաղափարին, այն, իհարկե, շատ լավն է, ու եթե իրականանար, հրաշալի կլիներ: Հոռետես չեմ, բայց կասկածում եմ, որ այդ գաղափարը կյանքի կոչվի: Հավաքականության, միասնության խնդրում մեր ազգը երբեւէ աչքի չի ընկել, բացառությամբ օրհասական պահերի: Ի դեպ, սա նաեւ Սարոյանին հուզող ցավալի հարցերից մեկն էր:

***ԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ***